ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ԾՆՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

Հոկտեմբերի 20-ին, երկուշաբթի, երեկոյան ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը Կառավարական Տան մեջ այցելություն տվեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ պր. Ա. Քոչինյանին:

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին Իր ծննդյան հիսնամյակի ու գահակալության երրորդ տարեդարձի տոնակատարությանը մասնակցող արտասահմանյան հոգևորական և աշխարհական պատգամավորներ, որոնց թվում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Տեղապահ ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոս Աջապահյանը, թեմական առաջնորդներ և այլ աշխարհական ներկայացուցիչներ:

Ընդունելությանը ներկա էին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի գործերի կառավարիչ պր. Դ. Վարդանյանը և պաշտոնական այլ անձինք:

Վեհափառ Հայրապետի և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ պր. Ա. Քոչինյանի և պատգամավորների միջև տեղի ունեցավ սրտագին զրույց:

Վերջում Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար և հրաժեշտ առավ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ պր. Ա. Քոչինյանից: